Քաղաքացիական գործ թիվ **ԵԴ2/2591/02/24**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Դատարան)

նախագահությամբ դատավոր՝ ՎԱՀԱԳՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ

2024 թվականի ապրիլի 19-ին (ք. Երևան)

Քննարկելով ըստ հայցի «Սիլ Ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ-ի ընդդեմ ՀՀ Ազգային անվտանգության ծառայության՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար շարժիչներով փոխադրամիջոցների ապահովագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԾՁԲ-24/1-ԱՊՊԱ-2 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ «Բոնուս Ասիստանս» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի մասին քաղաքացիական գործով պատասխանողի ներկայացուցչի կողմից ներկայացված՝ կասեցումը վերացնելու մասին միջնորդությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից 06.04.2024 թվականին հայցադիմում է ներկայացվել ընդդեմ ՀՀ ազգային անվտանգության ծառայության՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար շարժիչներով փոխադրամիջոցների ապահովագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԾՁԲ-24/1-ԱՊՊԱ-2 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ «Բոնուս Ասիստանս» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի մասին, որը նույն օրը մակագրվել է դատավոր Վահագն Թորոսյանին:

Դատարանի 10.04.2024 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

19.04.2024 թվականին Դատարան է ներկայացվել ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի գրավոր միջնորդությունը՝ ներքոշարադրյալ բովանդակությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

Օրենքի 234.11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը «Գնումների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում: Դատարանը սույն մասով նախատեսված որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում:

Այս կապակցությամբ նշել է, որ խոսքը վերաբերում է ՀՀ Ազգային անվտանգության ծառայությանն ամրացված տրանսպորտային միջոցների համար ԱՊՊԱ պայմանագրերի կնքմանը, որոնց նախորդ ԱՊՊԱ պայմանագրերի ժամկետները լրանում են 2024 թվականի ապրիլի 21-ից սկսած: Ապահովագրման ենթակա տրանսպորտային միջոցները շահագործվում են ՀՀ ազգային անվտանգության ծառայության կառուցվածքային՝ հիմնականում օպերատիվ, ստորաբաժանումների կողմից, որոնցով ապահովվում է Ծառայության հիմնական գործունեության հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզական, պետական սահմանի պահպանության, հանցագործությունների դեմ պայքարի ուղղություններով տարվող օպերատիվ և այլ անհրաժեշտ աշխատանքները: Այսինքն, տվյալ ավտոմեքենաները հանդիսանում են նաև Ծառայության այն միջոցները, որոնցով Ազգային անվտանգության մարմիններն իրականացնում են իրենց ծառայողական պարտականություններն՝ ապահովելով անձի, հասարակության և պետության անվտանգությունը: Այդ տրանսպորտային միջոցների համար նախկինում կնքված ԱՊՊԱ պայմանագրերի ժամկետների ավարտման դեպքում, դրանք հնարավոր չի լինի շահագործել, Ազգային անվտանգության մարմինների գործառույթները պատշաճ կերպով իրականացնելու հարցում խնդիրներ կառաջանան, ինչը չի բխում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության շահերից:

Ելնելով վերոգրյալից միջնորդել է թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԾՁԲ-24/1-ԱՊՊԱ-2 ծածկագրով գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում կայացնել:

Ուսումնասիրելով Միջնորդությունը, Դատարանը գտնում է, որ այն ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է

շարունակել գնման գործընթացը, դատարանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում: Դատարանն այդ որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

<<Ազգային անվտանգության մարմինների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի համաձայն՝ ազգային անվտանգության մարմինները Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման համակարգի բաղկացուցիչ մասն են և իրենց իրավասության սահմաններում ապահովում են անձի, հասարակության ու պետության անվտանգությունը:

Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ...Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմինների համակարգը կազմված է լիազորված մարմնից, ներառյալ՝ կենտրոնական և մարզային մարմիններից, սահմանապահ զորքերից, ուսումնական կենտրոններից, հատուկ և այլ ստորաբաժանումներից:

Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմնի կառավարումն իրականացնում է վարչապետը, իսկ անմիջական ղեկավարումը՝ լիազորված մարմնի ղեկավարը:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ազգային անվտանգության մարմինների գործունեությունն իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով.

ա) հետախուզական գործունեություն.

բ) հակահետախուզական գործունեություն.

գ) ռազմական հակահետախուզական գործունեություն.

դ) պետական սահմանի պահպանություն.

ե) պայքար հանցագործությունների դեմ:

Դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում հարցը վերաբերվում է ՀՀ ազգային անվտանգության ծառայությանն ամրացված տրանսպորտային միջոցների ԱՊՊԱ պայմանագրերի կնքմանը:

Դատարանը նաև անվիճելի է համարում, որ ավտոմեքենաները հանդիսանում են Ծառայության տեխնիկական միջոցները, որոնց օգտագործմամբ ազգային անվտանգության մարմիններն իրականացնում են իրենց ծառայողական պարտականությունները՝ ապահովելով անձի, հասարակության և պետության անվտանգությունը:

Դատարանը նաև հիմնավոր է համարում միջնորդությամբ, ըստ էության, ներկայացված այն փաստարկը, որ առանց խնդրո առարկա տրանսպորտային միջոցների՝ օրենսդրության պահանջների պահպանմամբ օգտագործման, ՀՀ ազգային անվտանգության ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության արդյունավետ իրականացումը կհայտնվի վտանգի տակ, ինչը չի բխում ազգային անվտանգության շահերից, քանի որ այդ ստորաբաժանումների գործունեության շնորհիվ ապահովվում է հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզական, պետական սահմանի պահպանության, հանցագործությունների դեմ պայքարի ուղղություններով տարվող օպերատիվ աշխատանքները:

Դատարանը գտնում է, որ սույն գործով վեճի առարկա հանդիսացող՝ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԾՁԲ-24/1-ԱՊՊԱ-2 ծածկագրով գնման գործընթացի օրենքի ուժով կասեցման պայմաններում, որն օրենքով սահմանված կարգով ձգվելու է մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը, իսկ այդ իրավիճակը, հաշվի առնելով սույն գործով կայացվելիք

դատական ակտերի օրենքով նախատեսված բողոքարկման ընթացակարգերի տևողության ողջամիտ ժամկետները, կարող է տևել մինչև մի քանի ամիս: Մինչդեռ, այդ ժամանակահատվածում ՀՀ ազգային անվտանգության ծառայության ավտոմեքենաների համար նախկինում կնքված ապահովագրական պայմանագրերի ժամկետները 21.04.2024թ.-ից սկսած լրանալու պատճառով, այդ ավտոմեքենաների՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան շահագործման անհնարինության հետևանքով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության արդյունավետ աշխատանքին, հետևաբար նաև՝ ՀՀ ազգային անվտանգության շահերին, կարող է իրական վտանգ սպառնալ:

Վերոգրյալի հիման վրա, Դատարանը գտնում է, որ ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար շարժիչներով փոխադրամիջոցների ապահովագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված՝ թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԾՁԲ-24/1-ԱՊՊԱ-2 ծածկագրով գնման գործընթացը, որը կասեցվել է օրենքի ուժով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 234.1-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի հիման վրա:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ և 200-րդ հոդվածներով, 234.11-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի 19.04.2024թ.-ի միջնորդությունը բավարարել. ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար շարժիչներով փոխադրամիջոցների ապահովագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված՝ թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԾՁԲ-24/1-ԱՊՊԱ-2 ծածկագրով գնման գործընթացի կասեցումը վերացնել:

2. Սույն որոշումն անհապաղ ուղարկել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին՝ նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում անհապաղ հրապարակելու նպատակով:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **ՎԱՀԱԳՆ ԹՈՐՈՍՅԱՆ**